

Թադևոս Վ. Տոնոյան
Բանաս. գիյր. թեկնածու

ՉԱՐԵՆՑԻ «ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՏԱՂԻ ԲԱՌԸ*

Բանալի բառեր – բառ, ներտեքստային տրամաբանությամբ, համատեքստային տրամաբանության առարկայական-նյութական-շոշափելի խորհրդանիշներ:

Հայերենի համատեքստը, կարևորելով խոսքը, պատկառելի հիմքեր է ստեղծել խոսքը կերպարայնացնելու, խորհրդանշանացնելու համար:

Հայոց լեզուն որպես մայրենի կրողները պաշտամունքային վերաբերմունք ունեն առ Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» տեքստը, ըստ որի՝ Հայաստանի առաջին բնութագրականը **բառն** է: Այսինքն՝ **բառը** Հայաստանի բանալին է: Բառի (լեզվի) նկատմամբ չարենցյան այս վերաբերմունքը հայերենի լեզվամտածողական-արժեհամակարգային հիմնական իրողություններից մեկն է, և, իհարկե, դժվար է պնդել, թե Հայաստանը ներկայացնող թերևս ամենալարված այս տեքստը պարզապես զգացմունքային զեղում է:

Հինգերորդ դարից սկսած՝ հայերենի տեքստը խոսքային երևույթներին վերաբերող անունները (**գրրիկ, թղթիկ, բան, հնչմունք, բարբառ, ձայն, երգ** և այլն) դարձնում է գեղարվեստական ստեղծագործության «գործող անձ», կերպար, խորհրդանիշ և այլն: Մեր ասածը կարելի է հաստատել Խորենացու (5-րդ դար), Սահակ Պարթևի (5-րդ դար), Կոմիտաս կաթողիկոսի (6-7-րդ դարեր), Դավթակ Քերթողի (7-րդ դար), Սահակյուլխտ Սյունեցու (8-րդ դար), Նարեկացու (10-րդ դար) և այլոց ստեղծած տեքստերի օրինակներով:

Խոսքը հայերենում ոչ միայն ներտեքստային արժևորումների է հասնում, այլև հայ մարդու կենցաղում զբաղեցնում է կարևոր դիրք: Հովհաննես Երզնկացու (13-րդ դար) տեքստը խոսքին բուժիչ հատկություն է վերագրում, իսկ Կոստանդին Երզնկացին (13-14-րդ դդ.) խոսքը ընդհանրապես պարզ է համարում:

Քաղաքակրթական հիշողությունը հակված չէ մտապահելու և արժևորելու այն տեքստը, որի խարիսխը բացասականությունն է՝ չարը, նախանձը, սուտը և այլն: Նման տեքստերը զրկված են բառը, տեքստը կերպար-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.05.2017:

րայնացնելու-խորհրդանշայնացնելու ներուժից և դատապարտված են մոռացության, ինչն էլ պատճառ է դառնում, որ դրանց կրողներն էլ դատապարտվեն մահվան: **Տեքստի մահը այն կրողի մահն է**, քանի որ տեքստն է մշակույթի հեծանը: Կա տեքստ՝ կա քաղաքակրթություն, չկա տեքստ՝ չկա քաղաքակրթություն:

Բարոյականությանը քաղաքակրթական հիշողությանն առնչվող տեքստերն են, որ ապրում և ապրեցնում են իրենց կրողներին և ի գորու են դառնում կերպարայնացնելու-խորհրդանշայնացնելու բառը, անգամ տեքստը: Դրանց կրողները չեն մեռնում, եթե նույնիսկ ֆիզիկապես մեռած են: Սասունցի Դավիթը չի մեռնում, որովհետև ժողովուրդը հիշում, կրկնում է նրա տեքստը, որը էպոսի խորհրդանշայնացրած տեքստերից է. «Ով քընած եք, արթուն կացեք»: Այս խոսքի կենդանությանը Դավիթը շաղկապված է քաղաքակրթական հիշողությանը: Նրա տեքստը հայերենի լեզվամտածողական համակարգում ակտիվ գործող խորհրդանիշ է: Նմանապես խորհրդանշայնանում է Թումանյանի տեքստային բանաձևումը. «Ես լավության խոսքն եմ ասում...»¹: Ուրեմն մեր համոզմամբ՝ տեքստը ոչ միայն այն խարիսխն է, որի վրա է ստեղծվում քաղաքակրթական արժեհամակարգը, այլև հենց ինքն է քաղաքակրթական անխուսափելի արժեք, և հենց ինքն էլ ընդունակ է իր խարսխի վրա դառնալու գործող կերպար, խորհրդանիշ:

Դժվար է որոշել այն սահմանները, որոնք եզրագծում են խոսքի նպատակն ընդհանրապես: Բայց խոսքի նպատակներից մեկն էլ ինքնավերարտադրումն է: Այս առումով՝ տեքստի նպատակը նաև հենց տեքստն ինքն է: Յուրաքանչյուր հեղինակային-անհատական տեքստ փորձում է մոտենալ մարդկության (հանրության) քաղաքակրթական համատեքստին: Նման տեքստը վեր է մեկ անձից, մեկ ազգից, ուղղված է ողջ մարդկությանն ու աշխարհին և լսելի է ողջ մարդկության ու աշխարհի մեջ.

Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու է՛ն մեծ **խոսքը**, որ տի **ասես** աշխարհքին...² :

Խոսքի մեջ շեշտելով խոսքասացությունը (Թումանյան, «Ես լավության խոսքն եմ ասում...», «**Խորհում ես դու է՛ն մեծ խոսքը**» և այլն)՝ հայ բանաստեղծության տեքստը վերահաստատում է բանաստեղծություն-արարչագործությունը որպես քաղաքակրթականության կենսականորեն կարևոր, գուցե և կարևորագույն ջանք:

Բառ բառը որպես խոսքի միավոր ու ինքնին խոսք հայտնվում է նաև Եղիշե Չարենցի ստեղծագործության կիզակետում՝ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության առաջին տողում.

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ **բառն** եմ սիրում³:

Անսպասելի և, ավելին, անհավատալի, անբնական է, որ սիրո զգաց-

1 Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, Հայաստանի ԳԱ հրատ., հատ. առաջին, էջ 47:

2 Թումանյան Հ., նույն տեղում, էջ 269:

3 Չարենց Ե., Պոեմներ, բանաստեղծություններ, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1984, էջ 289:

մունքը կարող է դրսևորվել բառի նկատմամբ: Սակայն հայերենի լեզվամտածողական համակարգում այս սկիզբը, եթե ուշադիր լինենք, պարզվում է՝ իր նախադեպերն ունի. Մայաթ Նովա՝ «Ա՛րի, բլբուլ, խո՛սի **բառը**»⁴, «Քիզ իդ բաս ո՞վ կարա բըռնի՝ հազար բաբաթ **բառ** իս ասում»⁵ տողերը և այլն:

Պատահականությունն է, որ Չարենցը «**բառ**»-ը շեշտում է ամեն ինչից առաջ: Չարենցյան այս տեքստի շարունակությունից տրամաբանվում է, որ հայերենիքի նկատմամբ բանաստեղծի սիրո կիզակետում «**բառ**»-ը չպետք է լիներ, քանի որ հաջորդող տողերում հեղինակի «սիրո թիրախները» (սազի լարը, ծաղիկները, վարդերի բույրը, երկինքը, ջրերը, լիճը, արևը, բուքը, պատերը, քարը) ավելի քան տեսանելի, շոշափելի, առարկայական ու նյութական են, քան «**բառ**» վերացական հասկացությունը: Հիշյալ բառաշարքից թերևս միայն «հեզաճկուն պարն» է, որ առարկայական չէ, բայց, այնուամենայնիվ, տեսանելի է: «**Բառ**»-ը և դրա **արևահամ** մակդիրը անտեսանելի-վերացական են: Անհնար է շոշափել բառը, դժվար է տարրորոշել արևի համը: Չարենցյան տաղի հենց առաջին տողում հայտնված «**բառ**»-ը, առաջին հայացքից չի ներդաշնակվում սիրել բայի մյուս ուղիղ խնդիր լրացումների հետ: Սակայն այդ պատկերացումը կարող է ստեղծվել ոչ խորքային **ներտեքստային տրամաբանության** հետևանքով: Նույն տրամաբանությամբ մեզանում որոշ ժամանակ գործում էր հանկարծահայտ այն թյուր կարծիքը, թե իբր «**բառ**»-ի փոխարեն «**բար**» է եղել: Հասկանալի է՝ «**բար**»-ը ավելի շոշափելի, տեսանելի և առարկայական է ու նրա միջոցով նույնիսկ արևի համն է տարրորոշելի դառնում և այդ հանգամանքի շնորհիվ ավելի դյուրությամբ տեղավորվում տաղի ներտեքստային ընդհանուր տրամաբանության մեջ: Սակայն **համատեքստային տրամաբանության** տիրույթում, ամեն ինչ շատ ավելի բարդ է, քան կարող է թվալ:

Ժամանակակից գիտության պահանջներն այսօր արդեն պարտադրում են ժողովրդի հիշողության կողմից անվերապահորեն ընդունված տեքստերը քննել ոչ թե ներտեքստային տարածքում, անգամ թեկուզ և հեղինակի ողջ ստեղծագործության տիրույթում, այլ տվյալ լեզվով ստեղծված ողջ համատեքստի (տվյալ լեզվով ստեղծված-հիշված-պահպանված-արժևորված տեքստերի ամբողջության) համայնապատկերում: Այլապես որևէ տեքստի գնահատականը միակողմանի և թերի կլինի:

Երբ տարբեր սերունդներ ընդունում, յուրացնում և ոչ մի առիթ բաց չեն թողնում տվյալ տեքստը մեկ անգամ ևս հանրահռչակելու համար, պարզ է, որ գործ ունենք տվյալ լեզվամտածողությամբ ձևավորված արժեհամակարգային երևույթի պարունակի հետ: Տարակուսանք չկա, որ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» տաղը նման տեքստերի դասին է պատկանում, և այն պետք է քննել համատեքստային ողջ տիրույթում: Մեր կարծիքը, թե հիշյալ տաղի առաջին տողում հնչող «**բառ**» բառը չի տեղավորվում այդ ստեղծագործության ներտեքստային տրամաբանության մեջ, պետք է մտածելու տեղիք տա, որ տվյալ բառը տեքստում պահող ավելի հզոր «հենարաններ» կան:

4 «Հայ հին և միջնադարյան քնարերգություն», «Լույս» հրատարակչություն, Եր., 1986, էջ 421:

5 Նույն տեղում, էջ 423:

Դրանք համատեքստային-արժեհամակարգային «հենարաններ» են: Նախ ներկայացնենք, թե ինչու «բառ» բառը չի տեղավորվում տվյալ ստեղծագործության ներտեքստային տրամաբանության մեջ:

Կոնկրետ այս՝ «Ես իմ անուշ Հայաստանի» տաղի դեպքում հեղինակային տեքստի տրամաբանությանը առարկայական-նյութական-շոշափելի խորհրդանիշներին, հակադրվում է **հայերենի համատեքստային տրամաբանությունը:** «Բառ» բառը իր հոմանիշային խումբ կազմող այլ բառերի հետ հայերենի լեզվամտածողության մեջ արժեհամակարգային իրողություն է՝ որպես **ձայն-բառ-տեքստ** աստիճանակարգի օղակ: Եվ հայերենի համատեքստը իր լեզվամտածողական ատաղձը կազմող տեքստերում անընդհատ վերստեղծում է բառն իր հոմանիշային խմբի անդամներով՝ որպես քաղաքակրթական կյանքի առիավատյալ: Եթե պատկերավոր ասենք, «բառ» բառը Չարենցի տեքստի համար «գլխագիր» է դարձրել հայերենի համատեքստը, որ կարծես տաղի առաջին տողը գրելիս «բռնել է» Չարենցի ձեռքը, որպեսզի նա նախ գրի, որ **բառն** է սիրում: Դրան, ըստ երևույթին, նպաստել է Չարենցի տեքստում խորհրդանիշներին տրված մակդիրների՝ արնաման, ողբանվագ, հագարանյա և այլն, հոգեբանական գերլարումը, որի հետևանքով հիշված որոշիչները դառնում են բառ-խորհրդանիշներ:

Առանձնացնենք բանաստեղծության մեջ առկա որոշիչ-որոշյալ շարքի որոշիչները, որոնք նաև մակդիրներ են (հին, անուշ, արևահամ, վառման, ողբանվագ, լացակումած, արնաման, հեզաձկուն, մուգ, ջինջ, լուսե, վիշապաձայն, վետն, անհյուրընկալ, սև, հնամյա, հագարանյա, ողբաձայն, երկաթագիր, արյունաքամ, որբ, արնավառ, կարոտած, լուսապսակ, ճերմակ, անհաս): Առանձնացնենք նաև հատկացուցիչ-հատկացյալ շարքի հատկացուցիչները (Հայաստանի, սագի, ծաղիկների, վարդերի, աղջիկների, ամռան, ձմեռվա, խրճիթների, քաղաքների, սրտի, Նարեկացու, Քուչակի, Արարատի, փառքի): Այս բանաստեղծության ուժն էլ հենց այն է, որ որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունները հիմնված են Հայաստանի խորհրդանիշների վրա (այլապես կառույցը պարզ ու պարզունակ է՝ **սիրում եմ** - թվարկություն, **չեմ մոռանա** - թվարկություն): Փաստորեն, տեքստային փոքր տարածքում կենտրոնացած-խտացած համատեքստային խորհրդանշանացման ահռելի ծավալը մղում է դեպի բառի վերացականության-ընդհանրականության արտահայտությանը՝ «բառ» բառի խորհրդանշանացման ճանապարհով:

Ուրեմն չարենցյան տաղարանի «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տողը ենթադրում է, որ համատեքստը մշտապես ազդում է անհատական-հեղինակային տեքստի վրա: Համատեքստի նման ազդեցիկ ներգործությունը յուրաքանչյուր կոնկրետ տեքստի վրա հեղինակի կամքից անկախ գոյություն ունեցող այն ուժն է, որը արարչական բովանդակություն և կարողություն ունի:

«Բառ» բառը երևույթին տրվող անվան ընդհանրական անունն է, բառով անվանվում են և բառ են անվանում առարկայի, երևույթի, գործողության, հատկանիշի և այլնի անվանումը: Սա ինքնին բարդ վերացարկում է, որը չի համապատասխանում բանաստեղծության ուղղակի, պարզ, շոշափելի սիրո արտահայտությանը, սակայն իր վերացականությամբ, ընդ-

հանրականությամբ ու խորհրդանշայնությամբ սպասարկում է հայերենի համատեքստի պահանջը՝ այն, որ Հայաստանի քաղաքակրթական գոյության նախապայմանը բառն է՝ իր լեզվամտածողական-հոմանիշային շարքի անունների (**ձայն, երգ, խոսք, ձոն, գրրիկ, թղթիկ, բան, հնչմունք, բարբառ, գիրք** և այլն) հետ:

Այստեղից մի կարևոր եզրահանգում է բխում. լեզվի համատեքստը վերահսկում, հաճախ նաև կառավարում է նույն լեզվի սահմաններում ստեղծվող տեքստը:

Թադևոս Վ. Տոնոյան – գիտական հետաքրքրությունների ոլորտը հայոց լեզվով ստեղծված տեքստերի միջև առկա արժեհամակարգային իրողությունների ընդհանրությունն է, դրանց բացահայտումը: Հրատարակել է մի շարք հոդվածներ և ուսումնասիրություններ տեքստային տրամաբանության, մտածողության դրսևորման լեզվախոսքային ձևերի վերաբերյալ՝ փնտրելով լեզվաբանության, գրականագիտության և մշակութաբանության համադրման ուղիները:

Summary

THE WORD IN CHARENTS’ “I LOVE MY DEAR ARMENIA...” POEM

Tadevos V. Tonoyan

Key words – words, context, textual logic, contextual logic, abstract, tangible symbols.

Charents’ attitude toward word (language) is one of the main realities in Armenian lingual-thinking and value system. Due to intertextual logic, it was considered for a while that in the text of Charents there was the word “harvest” instead of the word “word”. It is understandable that the “harvest” is a more tangible symbol than the “word”. However, in the context of the Armenian language, the word “word” seems more logical.

Резюме

СЛОВО В СТИХОТВОРЕНИИ ЧАРЕНЦА «Я МОЕЙ МИЛОЙ АРМЕНИИ...»

Тадевос В. Тоноян

Ключевые слова – слово, контекст, текстовая логика, контекстная логика, абстрактные, осязаемые символы.

Отношение Чаренца к слову (язык) является одним из основных реалий армянского языкового мышления и системы ценностей. Из-за интертекстуальной логики некоторое время считалось, что в тексте Чаренца было слово „урожай“ вместо „слово“. Вполне понятно, что «урожай» является более осязаемым символом чем „слово“. Однако, в контексте армянского языка более логичным кажется слово «слово».